

**ԸՆՏԱՆԻՔԻ ԴԵՐՈ ԱՆՉԱՓԱԿԱՍՆԵՐԻ ՀԱՆՑԱՎՈՐ ՎԱՐԹԱԳԾԻ
ԶԵՎԱԿՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ***

Գայանե Ներսիսյան

Ընտանիքը սոցիալական առաջին ինստիտուտն է, որտեղից սկիզբ է առնում կյանքի շարունակությունը, որը կարգավորում է հասարակության մի շարք գործառույթներ: Նրանով է պայմանավորված վերարտադրության, աճող սերնդի կրթության, դաստիարակության սոցիալականացման, նյութական ապահովության, հոգևոր կայուն զարգացման իրականացման հնարավորության: Այսուել է հիմք դրվում անձի՝ որպես հասարակության լիարժեք անդամի ծևավորումն ու զարգացումը:

Հաճախակի ենք հանդիպում ընտանիքների, որտեղ հանդիպելով անհաջողությունների, ուժեղանում է լարվածությունը և խորանում հիմնախնդիրները՝ ստեղծելով կոնֆլիկտային հրավիճակներ: Այդ նպատակով ստեղծվում է հաղորդակցման անբարենպաստ մթնոլորտ և միջանձնային անբարենպաստ հարաբերություններ: Ի հայտ են գալիս այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են՝ ամուսնալուծությունը, միայնակ մայրությունը, բռնությունը ընտանիքում, որդեգրման խնդիրները, գործազրկությունը, ալկոհոլիզմը, թմրամոլությունը, որոնք իրենց բացասական ազդեցությունն են թողնում երեխայի անձի ծևավորման գործում:[1]

Զնայած որ դպրոցի դերն ու նշանակությունը կարևորագույններից է անչափահաններին կրթելու և դաստիարակելու գործում և համարվում է դաստիարակության կարևորագույն դարբնոց, մեր դպրոցն ուսուցման գործընթացի կազմակերպումն ավելի է առաջնային համարում և դաստիարակությամբ բավականաչափ ուշարություն չի դարձվում, մինչդեռ դարեր շարունակ դպրոցը համարվում է անչափահանի երկրորդ տուն և մանկավարժությունը համարվում է գիտություն դաստիարակության մասին:

Ուսուցիչը պետք է օգնի ծնողին իր սեփական երեխայի հետ փոխադարձ շփկելու, ճիշտ հարաբերություններ ստեղծելու համար: Ուսուցիչը պետք է օգնի և բացատրի, որ դաստիարակության բարձր արդյունքի կարող է հասնել միայն երկխոսության միջոցով, և ծնողը երեխայի հետ պետք է շփկի, ինչպես հարգանքի արժանի մարդու հետ, նոյնիսկ եթե նա կատարել է ինչ-որ պատճի արժանի հանցանք, երեխան ունի իրավունք սեփական կարծիքը արտահայտելու: Պետք չէ թերազնահատել նրա անհատականությունը, այլ փորձել քննարկել նրա կողմից կատարված արարքը, որը հետազոյւմ կփոխի նրա բնավորությունը: Ուսուցիչը երբեմն կարող է ծնողին բացատրել, որ երեխայի վարքի վրա ազդել են դպրոցում տեղի ունեցածը և դասարանում պատահածը:[2]

Եթե դրա հետ միասին ընտանիքն էլ անբարենպաստ է, ապա երեխան անխուսափելի հրաժեն հայտնվելուն է փողոցում գրկվելով հոգատարության որևէ դրսնարությունը:

Երեխաները հասարակության ամենախոցելի, անօգնական և բույլ խմբերն են, որի զգացումն ու վիճակը կախված են մեծահասակներից: Երեխայի անհատականության ծևավորման ընթացքում կարևոր գործոններից են ինչպես ի ժնե ժառանգական որակ մերը, այնպես էլ երեխայի շրջապատող միջավայրը:

** Հոդվածն ընդունվել է 26.03.2015:

Հոդվածը տպագրության է երաշխավորել ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի նախագահ, ի.գ.թ., Ա.Թադևոսյան:

ՄԵԽՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱԼԱՐՄԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2015

Մարդը, մինչև չափահաս՝ ինքնուրույն սուբյեկտ դարնալը, երեխա է: Երեխա է համարվում 18 տարին չլրացած յուրաքանչյուր անձ: Զարգացման յուրաքանչյուր փուլ կատարվում է իր հոգեբանական ծևավորումներով: Ինչպիսին կիրակի երեխան ապագայում, մեծապես կախված է նրանից, թե ինչպես է նա ամցնում զարգացման փուլերը: Եվ ամենակարևորը՝ ինչպես են մեծահասակները նպաստել, որ նա հաջող անցնի այդ փուլերը: Իրենց ֆիզիկական, հոգուր, սոցիալական անհասունությամբ նրանք թույլ են, անպաշտպան, կյանքի մարտահրավերներին դիմակայելուն անպատրաստ:[3]

Հավանաբար չկան ընտանիքներ, որոնցում չինեն վեճեր և տարածայնություններ: Նյարդայնացած ծնողների անկառավագելի գործողությունները հաճախ կարող են առիթ տալ երեխայի նկրողի առաջացմանը: Երեխաների նկրողների և վախերի ուսումնասիրությամբ զբաղվող գիտնականները պնդում են, որ ծնողների միջև առաջացած վեճերը կարող են երեխայի մեջ առաջ բերել դիսրես: Այն ազդում է նրա օրգանիզմի վրա, թուլացնում է բիոտոնուսը, իշեցնում դիմադրողականությունը և խախտում հոգեկան անդրորդը: Սուր կոնֆլիկտների ժամանակ պայքարը թեժանում է բոլոր ձականությունը: Եվ երբ արտահայտվում է ամուսինների անհարգալից վերաբերմունքով, երեխաները վեճի մեջ են ներքաշվում: Երեխաները ժամը են տամում ծնողների ամհամերաշխությունը:

Երեխան ունի մեծահասակ հարազատին վստահելու, նրա կողմից իրեն պաշտպանված զգալու պահանջ: Եթե երեխան գրկված է այդ պաշտպանվածությունից, փոխում է իր վարքը: Երեխայի մեջ առաջանում է հակասության զգացում և ազրեսիա: Որոշ երեխաներ ծեռք են բերում մատնիչի, ցինկի գծեր, ինքնամփություն, ժամանակից շուտ սեռական հետաքրքրություն, երեխայի մեջ կարող է ծևավորվել նաև ստախոսություն, շողոքրդություն, շահախնորդություն, անվստահություն: Կոնֆլիկտային ընտանիքի երեխաները որպես օրինաչափություն անընդհատ տիսուր են լինում:

Որպես հետևանք երեխայի մեջ առաջանում են հոգական խանգարումներ, որոնց հաջորդում են որոշակի խոչընդոտները՝ ծնողների հետ հարաբերություններում: Դա էլ իր հերթին առաջացնում է ծնողների պատասխան ափեկտիվ ռեակցիան, և ստեղծվում է ընտանեկան հարաբերությունների խանգարումների բարդ շղամ:

Կոնֆլիկտի ավելի բարդ ու խոր ծեր ամուսնալությունն է: Այս դեպքում երեխաները գերծ չեն անհանգստությունից և ընտանեկան լարկած վիճակներից, որտեղ գրույցը պարբերաբար վեր է ածվում վեճերի: Այդպիսի կոնֆլիկտները երեխայի վրա էլ ավելի ավերիչ ազդեցություն են ունենում:

Նկատվել է՝ նախադպոցական տարիքի երեխաները հաճախ իրենց մեղավոր են համարում ծնողների ամուսնալության մեջ: Սուր տասը տարեկան երեխաները մեղադրում են ծնողներին կամ միայն մեկին, ու մեղավոր են զտնում իրենց անպաշտպան մնալու մեջ:

Իր հերթին ընտանիքի աղքատությունը շատ լուրջ ռիսկային գործոն է, երեխաների լիարժեք խնամքի և սոցիալականացման համար: Աղքատ ընտանիքներում մեծացող երեխաների համար ապրանքներն ու ծառայությունները դարնում են դժվարամատչելի, իսկ ընտանեկան միջավայրը՝ անապահով ու ռիսկային, երեխն անգամ վտանգավոր: Նշանակած պահանջմունքները չքավարարելու պատճառով ընտանիքում լարվածություն, կոնֆլիկտներ, կազմալուծվածություն է առաջանում, երբեմն՝ ծնողների հասարակայնորեն անցանկալի վարք ու պահվածք, որից առավելագույնս տուժում են երեխաները: Երեխայի նյութական պահանջմունքները չքավարարելը վտանգում է երեխայի հոգական պահանջմունքի բավարարումը: Երեխայի դաստիարակությունը հասարակության կարևորագույն խնդիրն է, որը պետք է իրականացնեն ոչ միայն ծնող-

ՄԵՐՈՐԴ ՄԱՆՈՒՅԹ ՀԱՍԱՏԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2015

Աերը, այլև նրանց հետ համատեղ պետությունը և այլ հասարակական կազմակերպություններ: Մանկական մուրացկանության մեծ մասը ընտանեկան անբարենպաստ պայմանների հետևանք է (գործազրկություն, աղքատություն, սոցիալապես անապահով վիճակ):

Արկա են այնպիսի ընտանիքներ, որտեղ ծնողները գրաղվում են թմրամոլությամբ, հարբեցողությամբ և անբարդյականությամբ: Երեխն երեխաները, ընկնելով նրանց ազդեցության տակ, կամ ներգրավվելով այդ միջավայրում, կամ ուղղակի ենթարկվելով ճնշման, սկսում են ալկոհոլ օգտագործել, գրաղվել գորությամբ, թմրամոլությամբ: Երեխաների մեծամասնության մոտ առաջանում է բացասական վերաբերմունք իրենց ծնողների հանդեպ:

Անչափահաս հանցավորները մեծ մասամբ չեն հարգում իրենց ծնողներին: Վերջիններս կորցնում են իրենց հեղինակությունը: Դաստիարակչական խնդիրները լուծում են միայն ֆիզիկական «պատիժների» միջոցով, որի հետևանքով էլ անչափահասները հեռանում են տնից: Դրան նպաստում են նաև երեխայի թռվությունն ու անպաշտպանվածությունը, ցածր գիտակցական մակարդակը, հասունացած երևալու ձգողումը:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ անչափահասը միանգամից հանցագործ չի դառնում: Սկզբում նա դուրս է մնում ծնողների հսկողությունից, ապա երևան են գալիս բացասական վերաբերմունք դեպի ուսումը և կարգապահությունը դպրոցում: Շիվելու պահանջը նրան տանում է դպրոցից դուրս՝ դեպի անբարենպաստ միջավայր:

Սանկական գորությունների ուսումնասիրությունից դիտվում է որ գորությունները ծավալվում են անսպասելիորեն, ոչ նպատակադրված և ոչ էլ պլանավորված ծնուզ: Երեխան տեսել է ինչ-որ առարկա և առաջին իսկ հայցքից նրան այն շատ է դուր եկել: Այդ պահին նա չի կարող իրեն զայտել և հաղթահարել գայթակղությունը: Նա անմիջապես, առանց մտածելու, վերցնում է այդ իրը և ապրում զգացմունքային հաճելի պահ, մեծ բավականություն՝ ցանկալի իրին տիրամանլու համար: Միևնույն ժամանակ երեխան զգում է վախ, որ իրեն կրօննեն հանցանքի վայրում: Որոշ ժամանակ անց նա սկսում է մտահոգվել, կարծեն թե իրեն արդեն հայտնի էր դառնում, որ գողացած իրը չի կարողանա ազատ օգտագործել, նրանով խաղալ կամ ընկերներին ցույց տալ: Նա լավ տեսնում և լսում է, թե շրջապատում ինչպես են քննադատում գողին: Նրան սկսում է տանձել ամորի զգացողությունը: Մեծահասակները ձգուում են նրան ներելու և շարունակել նրան վստահելու՝ չվնասելով երեխայի ինքնասիրությունը, այս պարագայում արդեն կարևոր է ճիշտ պատժամիջոցի ընտրությունը և բացատրել իր արարքի լրջությունը:

Սանկական այս բնույթի գորությունը հոգեբանները և վերլուծաբաններն անվանում են «գայթակղություն, հրապուրանք»: Երեխաների մոտ կարող է կապված լինել կամային ոլորտի անբավարար զարգացման հետ, չնայած նրան, որ նա ամոր է զգում իր կատարած արարքի համար, բայց իր ցանկությանը չի կարող դիմակայել:

Կան երեխաներ, ովքեր հաճախ գորություն են անում, հավանաբար իրենց կյանքում նրանք չեն զգացել սեր, նուրբ վերաբերմունք, համակրանք, ուշադրություն ծնողների, մտերիմների, ընկերների կողմից: Shawd արարքով ստիպում են նրանց ուշադրության արժանանալու համար: Հաճախ այսպես պատահում է այն երեխաների հետ, որոնք անմիջական չեն, ինքնամփոփ են, մեկուսացված, «պարզ և բաց» չեն կարողանում արտահայտել իրենց զգացմունքները, զախը, երկչուսությունը: Մեծահասակների կողմից սարը և անտարբեր վերաբերմունքի արժանանալով՝ այդ երեխաները կատարում են, այսպես կոչված «վրեժ գորություն»:

ՄԵՄՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2015

Երեխան կարող է գողանալ այն իրը , որը նա նախօրոք խնդրել է իր դասընկերոցից ժամանակավոր օգտագործման համար, բայց նրանից մերժում ստանալով՝ դիմել է գողության:

Կան նաև երեխաներ, որոնք գողանում են միանգամայն աննպատակ, անհեթեթ: Նրանք վերցնում են այնպիսի իրեր, որոնք ընդհանրապես իրենց պետք չեն, որոշ ժամանակ ամց շուտ մոռանում են : Պարզվում է, որ այսպիսի երեխաները, բռնվելով, շատ ծանր են տանում կատարված, ճնշվում են, վատ են զգում իրենց, նույնիսկ ամոթից շատ են անհանգստանում, որ այս անգամ ծնողները և ընկերները իրենցից երես կրեքեն: Հենց այսպիսի մանր թվացող գողությունները, հետագայում ծավալվելով, ճակատագրական են դառնում հասունացող երեխայի հետագա ողջ կյանքի համար: Հետազոտող-մասնագետները, հոգեբանները, հոգեբույժները, իրավաբանները վերոհիշյալ երևույթները կապում են «կլեպտոմանիա» հունարեն բարի (klepto - գողանում, հափշտակում, փախցնում և tania - անմնություն, խելագարություն) հետ: Այն բնորոշվում է որպես գողություն կատարելու հիվանդագին հակում, գողանություն, իրեր հափշտակելու նկատմամբ պարբերաբար առաջացող հանկարծակի հակում: [4]

Ծնողական հսկողության ոչ ճիշտ ընտրված մեխանիզմները, ընտանիքի անկազմակերպ և անկանոն կենցաղը նպաստում են երեխաների իրավախախտ վարքի առաջացմանը: Մասնագետները նշում են հետևյալ օրինաչափությունները. որքան ջերմ են ընտանեկան հարաբերությունները, այնքան փոքր է հավանականությունը, որ երեխայի մեջ հանցավոր վարքագիծ ծևավորվի:

Անչափահաս իրավախախտների ծնողներին բնորոշ է կամ չափից դուրս դաժան վերաբերմունքը, կամ թողարկությունը և կարգուկանոն հաստատելու անկարողությունը: Այսինքն՝ ծնողների մի խումբն ամեն ինչ թույլ է տալիս, իսկ մյուսը՝ խստորեն արգելում է:

Ուստիմնասիրությունները ցույց են տալիս, որ երեխաների շեղվող վարքի ծևավորման տեսանկյունից վտանգված են ոչ յրիվ կազմով, կրնֆիլկուային, ամուսնայուժվող, ծնողավարման անբավարար հմտություններով ընտանիքները: Նման ընտանիքներում երեխաների խնամքն ու սոցիալականացումը բնականոն չեն, ինչն էլ նպաստում է երեխաների իրավախախտ վարքագիծ ծևավորմանը:

Օրինաչափ կապ է նկատվում նաև անչափահասների իրավախախտումների բնույթի ու հաճախականության և նրանց սեռերի միջև: Վիճակագրությունը վկայում է, որ տղաների իրավախախտումների և հակասոցիալական վարքի հավանականությունն աղջիկների վարքից 4-5 անգամ ավելի մեծ է:

Երեխաների իրավախախտ վարքի ծևավորման հարցում մեղքի իրենց բաժինն ունեն նաև զանգվածային լրատվամիջոցները: Բռնության, դաժանության տեսարանների առատությունը, բարեկեցիկ ապրող հանցագործի, բարոյականության յուրաքանչյուր սկզբունք ուսնահարող «հերոսի» կերպարները կարող են խթանել իրավախախտ և հակասոցիալական վարքի դրսևորումները:

Անհրաժեշտ է իմանալ, որ առանձնահատուկ են հոգեկան շեղումներ դրսևորող անչափահասներին առնչվող դեպքերը: Նրանք ընտանեկան խնամքից ու ջերմությունից զրկված երեխաներն են, որոնք չունեն պատասխանատվության զգացում և ավելի լավը դարձնալու ներքին դրդապատճառներ:

Իրավախախտ վարք ցուցաբերող երեխաները հասարակության և նաև ինստիտուտների թերացումների գոհեր են: Հետևաբար նրանց հետ աշխատելիս հարկավոր է ուշադրություն դարձնել նրանց սոցիալական միջավայրին ու պայմաններին և փորձել դրանք դարձնել ավելի բարենպաստ:

ՄԵԽԱԿԱՆ ԱՎԱՍՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2015

Անտեսումը մշտապես երեխայի ֆիզիկական և հոգեբանական տարրական պահանջների չքավարարելն է, որի հետևանքը կարող է լինել երեխայի առողջության և զարգացման լուրջ վատրարացումը: Դա իր մեջ ներառում է ծնողի կամ խնամակալի կողմից անհրաժեշտ սնունդ, կացարան և հագուստ չորամադրելը, երեխային ֆիզիկական վնասից կամ վտանգից չպաշտպանելը կամ համապատասխան բժշկական օգնության կամ բուժնան հնարավորություն չապահովելը: Դա կարող է նաև ներառել երեխայի տարրական հոգական պահանջների անտեսումը կամ դրանց չպատասխանելը:

Երեխայի հանդեպ հոգատարության բացակայությունը նույնպես դիտարկվում է որպես երեխայի հանդեպ անտեսում, որի դեպքում երեխան հայտնվում է հոգեկան և ֆիզիկական անհարմարության վիճակում այն բանի հետևանքով, որ ծնողների կողմից չեն բավարարվում նրա առաջնահերթ կարիքները:

Երեխայի անտեսումը նպաստում է այնպիսի վարքի ձևավորմանը, ինչպիսիք են՝

1.սաղիզմ-բռնություն՝ դաժանություն կենդանիների, երեխաների հանդեպ, վառ-դալիզմ, հարձակողական վարքագիծ, ինքն իրեն վնասող վարքագիծ, հրեհեփումներ.

2. մննդամբերքի գողություն կամ մուրում, շատակերություն, հացարու.

3.ցուցադրական զգացմունքայնություն՝ թատերականացված ելույթներ, մակերեսային գրավչություն, չտարբերակված կապվածություններ.

4.կենացումանիա - կոնպուսիվ սուս, քրոնիկ գողություն, հիվանդագին ստախություն.

5.սեռական հարկադրանք՝ գայթակղող վարքագիծ կամ հագուստ, սեքսուալ այլ ակտիվություն երեխաների հանդեպ.

6.պասիվություն - ազդեսիվություն՝ զիջողականություն, հարցերին պատասխանելուց հրաժարում, չարության սադրում, ուրիշների մոտ, հարձակողական վարքագիծ.

7.խղճի բացակայություն՝ մեղքի զգացման բացակայություն, մեղքի ժխտում կամ սեփական մեղքի ուրիշներին վերագրում: [5]

Ինչ վերաբերվում է հիմնախնդրի իրավական վերլուծությանը, ապա կարող ենք հստակ ասել, որ պետությունն համարվում է երեխաների իրավունքների երաշխավորն ու պաշտպանը: Եթենային Ղարաբաղի Հանրապետությունում երեխայի իրավունքները սահմանվում են ԼՂՀ սահմանադրությամբ, ԼՂՀ միջազգային պայմանագրերով, և ԼՂՀ այլ նորմատիվ իրավական ակտերով:[6] Հանցագործություն է համարվում հանրության համար վտանգավոր այն արարք, որը սահմանված է ԼՂՀ քրեական օրենսգրքով և ենթակա են քրեական պատժի: Քրեական օրենսդրությունը խախտած համարվող, մեղադրվող կամ մեղավոր ձանաչված երեխաներին վերաբերող օրենքներում պետությունը սահմանում է այն նվազագույն տարիքը, որից ցածր երեխաները չեն ենթարկվում քրեական պատասխանատվության և, հետևաբար նրանց նկատմամբ քրեական գործ չի հարուցվում: Այդ տարիքն այսօր ԼՂՀ-ում ընդունված է 16-ը, իսկ որոշ առավել վտանգավոր հանցագործությունների համար՝ նաև 14-ը: 14 տարին ըլլացած անչափահասի նկատմամբ կիրավում են միայն բարոյական և դաստիարակչական բնույթի կամիսարդելիչ միջոցներ: [7]

Իրավական և բարոյական վարքագիծ նորմերի ծևավորման գործընթացն ավարտվում է դեռահասության շրջանում՝ 14-16 տարեկանում: Նշված հանգամանքները հաշվի են առնվում օրենսդրի կողմից: Դեռահասության տարիքում հասակակիցների կարծիքները նրանց համար ավելի էական են, քան ծնողների և ուսուցիչների կարծիքները, նրանք սկսում են ծխել, կատարել անօրինական գործողություններ, կարգ խանգարել:

ՄԵԽՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2015

Այս տարիքում դեռահասը չափազանց խոցելի է, և միջավայրը կարող է անչափ մեծ ներգործություն ունենալ: Շրջապատը կարող է հրահրել և խրախուսել երեխայի բացասական վարքը: Նրանք հեշտությամբ են ընդորինակում ավագ ընկերների գործողությունները: [8]

Անչափահասին հանցագործության է դրում երեխն մեծերին նմանվելու, ընդորինակելու, ընկերական շրջապատում հեղինակություն ծեռք բերելու ծգոտումը:

Անչափահասների կողմից կատարված հանցագործությունների քննության ընթացքում համապատասխան մասնագետները պետք է տիրապետեն մանկավարժական, մանկական և պատանեկան հոգեբանության, կրիմինալիոգիայի և վիկտիմոլոգիայի գիտելիքներին:[9]

Հետևաբար անչափահասների կողմից կատարվող իրավախախտումները և հանցագործությունները կանխելու նպատակով ամփածեցն է.

- բարձրացնել ծնողների և ընտանիքի մյուս անդամների բարոյական գիտակցական մակարդակը,
- մշակել և իրականացնել ընտանիքի բարոյահոգեբանական իրավիճակն ու ապրելակերպը բարեկավելու, ընտանիքում առողջ միջանձնային հարաբերություններ ծևավորելու պետական ծրագիրը,
- բարձրացնել ծնողների իրավական պատասխանատվությունը երեխաների դրաստիարակության գործում,
- շարունակել բարեկավել ընտանիքների նյութական, կենցաղային պայմանները, ընդունել նախադպրոցական հիմնարկների ցանցը,
- ուսումնասիրել այն երևույթները, որոնք դարձնում են հանցագործության պատճառ և մշակել այնպիսի հանձնադրաբականներ, որոնց կրիառումը կապահովի դրանց վերացումը կամ կչեղոքացնի բացասական ներգործությունները.
- ամրացնել դպրոց-ընտանիք-հասարակություն կազմը, համապատասխան մասնագետներով, անչափահասների գործերով հանձնաժողովի, խնամակալցության և հոգեբարձուների մարմնի անդամներով, ուշադրության կենտրոնում պահել խոցված, ամուսնալուծված, սոցիալապես անապահով, հոգեկան հիվանդությամբ տառապող ծնողներ ունեցող երեխաներին՝ ցուցաբերելով համապատասխան աջակցություն,
- ծնողներն առավել ուշադիր և հոգատար վերաբերմունք պետք է ցուցաբերեն երեխաների նկատմամբ, սեր և բարություն՝ երեխաների հետ հաղորդակցվելիս, հավաստ ներշնչել նրանց ուժերի նկատմամբ, մշտապես հետևեն դպրոցական պայուսակի պարունակությանը՝ անձանոթ իրերի առկայության դեպքում ետ վերադարձնել ուսուցչին,
- պահպանել ներճնտանեկան անդորր, խուսափել բազմաբնույթ վեճերից ու կոնֆլիկտային իրավիճակներից, փորձել հարաբերություններ ստեղծել սիրո, փոխադարձ հարգանքի և վստահության վրա,
- անհրաժեշտ է երեխային ժանուքացնել ԼՂՀ քրեական օրենսգրքին. դա անհրաժեշտ է իրական հետևանամքների և պատժի վերաբերյալ նրա մեջ պատկերացում ծևավորելու համար,
- եթե ազրեսիայի և բռնության պատճառները սոցիալական վատ պայմաններն են, ապա այս հարցում նշանակալից ազդեցություն կունենան կյանքի պայմանները փոխելու հասարակական գործողությունները: Պետությունը պետք է բարեկավի ծնողների վիճակը՝ նրանց աշխատանքի տեղավորելով կամ մշտական

ՄԵՍՐՈՒԹ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2015

Ֆինանսական օգնություն ցույց տալով, վերացնելով սոցիալապես անապահով վիճակը,

- ստեղծելով հասարակական կազմակերպություններ, որոնք կտրամադրեն անվճար հոգեբանական, իրավաբանական խորհուրդներ, կյարգավորեն ընտանիքի անդամների փոխհարաբերությունները, ինչպես նաև հնարավորության սահմաններում տրամադրվի այլ ծառայություններ՝ սոցիալական, ֆինանսական հենվելով նշված համայնքի աջակցության վրա,
- կարևորել կրոնի գործոնը ուսումնական հաստատություններում, ձամքարներում՝ նշանակություն տալով ավանդույթներին, որպեսզի ձևավորվի կայուն, առողջ ընտանիքներով ու քաղաքացիներով հասարակարդ:

Ընտանիքի կայունությունն ու առողջ հասարակություն ապահովող ամենահուսալի գորությունը մնում է սերը՝ ամուսինների, ծնողների և երեխանների միջև:

ԾԱՍՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Թովմայան Ա., «Ընտանիք և դպրոց» գիտամեթոդական ամսագիր, «Ընտանիքի հետ սոցիալական աշխատանքի առանձնահատկությունները», Եր., 2014, թիվ 4, էջ 47:
2. <http://www.voppsy.ru/issues/1984/841/841058.htm> // Гаврилова Т.П. "О типичных ошибках родителей в воспитании", ст.60
3. Զեռնարկ ՀՀ ոստիկանութան անշափահասների գործերով աշխատակիցների համար, ՀՀ երեխայի իրավունքների պաշտպանության 2004-2015 թթ ազգային ծրագիր, էջ 11:
4. Արաքելյան Ա., «Ընտանիք և դպրոց» գիտամեթոդական ամսագիր, «Անդրադարձ մանկական գողության հիմնախնդրին», էջ 51:
5. Զեռնարկ ՀՀ ոստիկանութան անշափահասների գործերով աշխատակիցների համար, ՀՀ երեխայի իրավունքների պաշտպանության 2004-2015 թթ ազգային ծրագիր, էջ 21:
6. ԼՂՀ օրենքը երեխայի իրավունքների մասին՝ ընդունված Աժ կողմից 29.05.1996 թ., ընդհանուր դրույթներ.
7. ԼՂՀ քրեական օրենսգիրք:
8. Կոֆаровский Ю.В., Юридическая психология, Учебник, 3-е издание. М., 2008, стр.329:
9. Селиванова Н. А., Снеткова В. А. Руководство для следователей, М., 1997, стр. 437
10. Մակարենկո Ս.Ս., Մանկավարժական պրեմներ, Եր., 1968:
11. Антипова И. Г., Воровство в детском возрасте: анализ причин и коррекция. Ростов-на-Дону, 1995.

ԱՄՓՈՓԱԳԻՐ

**Ընտանիքի դերը անչափահասների հանցավոր վարքագիք
ծևավորման գործում
Գայանե Ներսիսյան**

Սույն հոդվածում ներկայացվում են ընտանիքի դերը հանցագործության հակում ունեցող և իրավախախտ անչափահասների վարքագիք ծևավորման գործում: Հոդվածը անդրադարձում է մի շարք պատճառներին, որոնք նպաստում են անչափահասների՝ հասարակության լիարժեք անդամի ծևավորման ու զարգացմանը: Ծնողական հսկողության ոչ ճիշտ ընտրված մեխանիզմները, ընտանիքի անկազմակերպ, անկանոն կենցաղը նպաստում են երեխաների իրավախախտ և հանցածին վարքի առաջացմանը: Նշված հիմնախնդիրները վերանայվել են հոգեբանության, մանկավարժության, իրավագիտության տեսանկյուններից և դրանց լուծման ուղիների կապակցությամբ տրվել են առաջարկներ:

Բանալի բարեր՝ ընտանիք, անչափահասի ծևավորում և զարգացում, դպրոց, հանցավոր վարք, կոնֆլիկտային իրավիճակներ, անտեսում, քրեական պատասխանատվության տարիք:

РЕЗЮМЕ

Роль семьи в деле становления несовершеннолетних со склонностью

к преступлениям

Гаяне Нерсисян

В данной статье представляется роль семьи в деле становления несовершеннолетних со склонностью к преступлениям и провононарушениям. Статья обращает внимание на ряд причин, способствующих становлению и развитию несовершеннолетних как полноправных членов общества. Неправильный выбранный контроль родителей, неорганизованность семьи, неправильный образ жизни способствует появлению детского преступного поведения. Статья не только рассматривает вышеперечисленные проблемы с психологической, педагогической, юридической точке зрения, но и предлагает соответствующие решения.

Ключевые слова: семья, формирование и развитие несовершеннолетнего, школа, правонарушение, конфликтные ситуации, пренебрежение, возраст уголовной ответственности.

SUMMARY

The Importance of Family in the Behavior of Teenagers
Gayane Nersisyan

The following article represents the importance of family in the behavior of teenagers addicted to crimes and offenses. We have raised and rebound some reasons which promote the formation and development of teenagers as worthy members of society. The wrong mechanism of parent supervision, the disorganized living conditions give rise to offenses and criminal behavior. The abovementioned problems have been studied from psychological, pedagogical and legal aspects. The article suggests certain ways of their solution.

Keywords: family, formation and development of the minor, school, offense, conflict situations, neglect, the age of criminal responsibility.